ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի մարտի 23-ի, ժամը 14:00-ի նիստի
N 10 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Կառավարման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Աննա Աշոտի Մինասյանի «Գործարար հաղորդակցում և բիզնես բանակցությունների կառավարում»** ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. ներկայացված ուսումնական ձեռնարկը նվիրված է գործարար հաղորդակցման և բիզնես բանակցությունների առանձնահատկությունների, տեսակների, խնդիրների, ռազմավարությունների և մարտավարությունների, ազգային առանձնահատկությունների ու դրանց արդյունավետության բարձրացման ուղիների ներկայացմանը: Ձեռնարկը նախատեսված է «Կառավարում (ըստ ոլորտի)», «Զբոսաշրջություն» մասնագիտությունների ուսանողների համար (բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման), «Գործարար վարչարարություն (կառավարում)» մագիստրոսական կրթական ծրագրերով ուսումնառողների համար: Ուսումնական ձեռնարկի նպատակն է ծանոթացնել ուսանողներին հաղորդակցման էությանը, տարրերին, առանձնահատկություններին՝ շեշտադրելով գործարար հաղորդակցման տեսակները, ուղղությունները, հաղորդակցման հոգեբանական և էթիկական բաղադրիչները, վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման ձևերը, հաղորդակցման արգելքները, գործարար մարդու իմիջը, հաճոյախոսություններն ու քննադատությունները գործարար հաղորդակցման մեջ և այլն: Ձեռնարկի հասցեատերեր կարող են լինել ոչ միայն ուսանողները, կառավարիչները, այլ նաև գործարար միջավայրի բոլոր մասնակիցներն ու հետաքրքրվողները, դասախոսները, մանկավարժները, բժիշկներն ու իրավաբանները, ընդհանրապես, բոլոր նրանք, ովքեր իրավամբ հետաքրքրված են գրագետ հաղորդակցությամբ:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 4 դրական կարծիք.

1) Ս.Ա.Ասատրյանց՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) միջազգային համագործակցության և կրթական բարեփոխումների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

2) Վ.Ռ.Մելքոնյան՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) ագրարային էկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու:

3) Թ.Մ.Մկրտչյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ:

4) Գ.Ս.Ասլանյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) կառավարման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված աշխատանքը համապատասխանում է ուսումնական ձեռնարկների համար պահանջվող բոլոր չափանիշներին և ունի գործնական կարևոր նշանակություն: Այն կարող է դառնալ գործարար հաղորդակցման և բիզնես բանակցությունների արդյունավետ կազմակերպման համար ուղեցույց, քանի որ պարունակում է թե՛ տեսական դրույթներ, թե՛ հաղորդակցման գործնական հմտությունները բարձրացնելու համար անհրաժեշտ նյութեր:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, կառավարման ամբիոնի, կառավարման ֆակուլտետի խորհրդի և համալսարանի գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ կառավարման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Աննա Աշոտի Մինասյանի «Գործարար հաղորդակցում և բիզնես բանակցությունների կառավարում»** ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության, 100 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում (նախատեսված է հրատարակչական պլանով): Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. մարտի 23
Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի մարտի 23-ի, ժամը 14:00-ի նիստի
N 10 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Դիանա Սիմոնի Մինասյանի «Հարկային վերահսկողություն»** ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. ՀՀ-ում հարկային վարչարարությունը դեռևս ձևավորման փուլում է, ինչի հեռևանքով ՀՀ հարկային օրենսգրքում և հարակից իրավական ակտերում շարունակական փոփոխություններ են տեղի ունենում և արդի պայմաններում խիստ կարևորվում է հարկային վերահսկողության ոլորտի գիտական հետազոտությունների իրականացումը: Ներկայացված ձեռնարկը բավական արդիական է և ունի կարևոր գիտական արժեք: Ձեռնարկի նպատակն է հարկային վերահսկողության քաղաքականության ձևավորման պատմության, փորձի, դրա իրացման արդի հիմնախնդիրների, առկա մարտահրավերների, զարգացման միտումների և առաջիկա հեռանկարների համալիր համեմատական ուսումնասիրությունը, ոլորտի հետագա զարգացման համար կարևոր տեսությունների մշակումն ու հիմնավորումը, ինչպես նաև այնպիսի լուծումների առաջադրումը, որոնք հնարավորություն կտան հարկային վերահսկողությունը դարձնել առավել մատչելի: Աշխատության 12 գլուխներում վերահսկողական կապերի մեջ շերտ առ շերտ ցույց են տրվում հարկային գործակալների, հարկային մարմինների պարտականությունների և իրավունքների, ռիսկային չափանիշների ընտրության սկզբունքների, հարկային ստուգումների ու ուսումնասիրության տեսակների, հարկման բազաների և հարկային պարտավորությունների գնահատման, հսկողության ընթացակարգի, հետազոտական միջոցառումների, հրապարակայնության, օրենսգրքով սահմանված պահանջները խախտելու հարցերը: Ձեռնարկն այս ուղղությամբ առաջին համակարգված փորձն է, որն օգտակար է ինչպես ուսանողության, այնպես էլ ոլորտի աշխատողների համար:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 4 դրական կարծիք.

1) Ռ.Ն.Սարինյան՝ ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

2) Գ.Ա.Գևորգյան՝ «Արարատ Ճանշին» ՍՊԸ ֆինանսական գծով տնօրեն, տնտեսագիտության թեկնածու:

3) Հ.Հակոբյան՝ «ԽԱՅԾ ԻՇԽԱՆ» ՍՊԸ ֆինանսական տնօրեն, տնտեսագիտության թեկնածու:

4) Ա.Վ.Մաթևոսյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) ֆինանսների ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված աշխատանքը համապատասխանում է ուսումնական ձեռնարկների համար պահանջվող բոլոր չափանիշներին և ունի գործնական կարևոր նշանակություն: Այն օգտակար կլինի ՀՊՏՀ ուսումնական ծրագրերում և այլ կրթական հաստատություններում ներառված համապատասխան առարկայական ծրագրեր ուսումնասիրողների համար և կծառայի ինֆորմացիոն աղբյուր ոլորտի սկսնակ և գործող մասնագետների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի, հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի խորհրդի և համալսարանի գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Դիանա Սիմոնի Մինասյանի «Հարկային վերահսկողություն»** ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության, 100 օրինակ տպաքանակով, հեղինակի միջոցներով: Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. մարտի 23
Երևան